ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնք,
ք. Եղվարդ, Երևանյան 1, Հեռ. (0224) 2-11-10, yeghvard.kotayq@mta.gov.am

22 հուլիս 2022թ.

<<ԷՖԼԴԵՎԳԵՅՄ>> ՍՊԸ-ի տնօրեն
Ա.Յավրումյանին

Հարգելի պարոն Յավրումյան.

Նաիրիի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<ԷՖԼԴԵՎԳԵՅՄ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2022թվականի հունիսի 30-ին կնքվել է <<ԿՄՆՀ-ԳՀԾՁԲ-22/8>> ծածկագրով ծառայության մատուցման պետական գնման պայմանագիր, որի 1. 1 կետով Կատարողը ստանձնում է Նաիրի համայնքի կարիքների համար տեսահսկողության համակարգի տեղադրման ծառայության մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Կատարողը պարտավորվել էր մինչև սույն թվականի հուլիսի 20-ը մատուցել համապատասխան ծառայությունը, սակայն մինչ օրս ծառայությունը չի մատուցվել:

Պայմանագրի 2. 1. 3 կետի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագրի պայմանները:

Ուստի հաշվի առնելով վերոգրյալը՝ Նաիրիի համայնքապետարանը 22. 07. 2022թ. -ից միակողմանի լուծում է <<ԷՖԼԴԵՎԳԵՅՄ>> ՍՊԸ-ի հետ 30. 06. 2022թ. -ին կնքված <<ԿՄՆՀ-ԳՀԾՁԲ-22/8>> ծածկագրով պայմանագիրը:

Ծանոթություն: Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՍԱՐԳՍՅԱՆ